ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 փետրվարի 2026 թվականի N 194 - Ն

ԵՐՐՈՐԴ ԵՎ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՀԱՋՈՐԴ ԵՐԵԽԱՅԻ ՆՊԱՍՏԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ԵՐՐՈՐԴ ԵՎ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՀԱՋՈՐԴ ԵՐԵԽԱՅԻ ՆՊԱՍՏ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՎՃԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական նպաստների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասը, 26.1-ին հոդվածի 5-7-րդ մասերը, 26.2-րդ հոդվածի 2-րդ, 5-րդ և 12-րդ մասերը և 26.3-րդ հոդվածի 5-րդ և 13-րդ մասերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Սահմանել, որ՝

1) երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստի չափն ամսական 50000 դրամ է.

2) երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստը նշանակում և վճարում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ իր համապատասխան ստորաբաժանումների միջոցով.

3) երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստը նշանակվում և վճարվում է ընտանիքում 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ նոր ծնված երեխայի ծննդյան կապակցությամբ դրամական աջակցության տեղեկատվական համակարգով:

2. Հաստատել երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստ նշանակելու և վճարելու կարգը՝ համաձայն հավելվածի:

3. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝

1) ապահովել սույն որոշման հավելվածով նախատեսված՝ ինքնաշխատ եղանակով իրականացվող գործընթացների ապահովման ծրագրային գործիքի մշակումն ու ներդրումը՝ մինչև 2026 թվականի մայիսի 1-ը:

4. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին և Ազգային անվտանգության ծառայության տնօրենին՝ ապահովել ինքնաշխատ եղանակով ծառայության ուղարկած հարցմամբ Հայաստանի Հանրապետության սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգից երեխայի (ում ծննդյան կապակցությամբ նշանակվում է երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստը)՝ Հայաստանի Հանրապետության սահմանը հատելու մասին տեղեկատվությունն ստուգելու գործընթացի ծրագրային գործիքի մշակումն ու ներդրումը՝ մինչև 2026 թվականի մայիսի 1-ը:

5. Սահմանել, որ մինչև սույն որոշման 3-րդ և 4-րդ կետերում նշված ծրագրային գործիքների մշակումն ու ներդրումը, առցանց ներկայացված դիմումի (տվյալների) հիման վրա երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստը նշանակվում է տարածքային կենտրոն ներկայացված դիմումի համար սահմանված կարգով:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է այն դեպքերի վրա, երբ երեխան ծնվել է 2026 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

20.02.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ